

օտար լեզուով կը խօսին յաճախ, եւ որոնց մէկ թաղին մէջ ընթացիկ բարբառը միւսին համար անհասկնալի է, կ'ըսեն:

Մեծ թիւով էջեր պէտք պիտի ըլլային, արձանագրելու համար, Մաթիկին հոգիին մէջ բարիքները այս եզակի անմբորդութեան, որոնք անիկա տուաւ մեծ կենդանութեամբ ինքնատիպ գոյնով: Կը նոթեմ միայն քնարական իր զեղումները, իրեն վայելող լաւատեսութեամբ մը ծիրանաւոր, այն դրուագումներէն, ուր անոր տրուած էր ականատես ըլլալ մեր ժողովուրդին ստեղծումին, քիչ-չատ բարեկեցիկ շրջաններու, հակառակ անոր, որ ջարդին թաթառը ամէնէն ուժով զարկած էր պատմական այդ ճամբու երկու եզրերը, մասնաւորաբար գիւղերը քանդելով: Անիկա չէր կրնար հաւատալ իր աչքերուն, թէ սա ժպտուն, կանաչով սքողուն տուներու փունջը չորս-հինգ տարի առաջ սեւ աւերակոյտ մըն էր, որուն զանազան խորշերուն այրիներ ու պառաւներ իրենց պզտիկները կը պատսպարէին վայրի խոտով: Հիմա՞: Անիկա չէր կրնար հաւատալ, թէ սա քաղաքը, նոյն այդ ժամանակին, պարպուած էր իր խանութներուն բոլոր մթերքէն ու տէրերէն: Հիմա՞: Հայկին բարբառը, թէ եւ աղաւաղ, կը հնչէր մեզմով լիքը վաճառատուներէն: Ու մատաղ տղաք, հագիւ պատանի, արագ-արագ գոհացում կու տային հազարով այդ ճամբորդներուն: Այս զեղումը հպարտութիւն մը չէր իր մօտ, այլ՝ խուլ տրտմութիւն մը: Ինչե՛ր պիտի չընէր այս ժողովուրդը, երբ այդ աշխատանքը վատնէր սեփական հողերուն ու հայրենի շէներուն: Բայց այս ուխտագնացութեան իրն է տարագր - ամէնէն շահեկան կողմը Մաթիկին ինքնացումն է, հոգեկան նոր այդ շեշտաւորումը, որով մեր ներքին իրականութիւնը նոր կշռոյթ մը կը ստանայ, հիւլէական նորոգ դասաւորման մը մէջ, ազդուելով խոշոր դէպքերէ, ընկերային կամ ցեղաբանական խուլ անդրադարձներով, տապալելով մեր մէջէն մեծ գօտիներ, ոտքի հանելով ուրիշ կառոյցներ: Մեր երիտասարդութեան խակ մասը